ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նարինե Խաչատուրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)
2019 թվականի նոյեմբերի 18-20-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

UNESCO

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի 40-րդ ընդհանուր համաժողովի շրջանակներում կայանալիք մշակույթի նախարարների հանդիպմանը

2019 թվականի նոյեմբերի 18-20-ը գործուղվել էի Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)՝ մասնակցելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի 40-րդ ընդհանուր համաժողովի շրջանակներում մշակույթի նախարարների հանդիպմանը:

Հանդիպման իմ ելույթում ընդգծել եմ, որ Հայաստանում ընթացող ժողովրդավարական գործընթացները հնարավորություն են ընձեռել մշակույթի և գեղարվեստական կրթության բնագավառում սկիզբ դնել բարեփոխումների՝

հիմնվելով համընդհանուր արժեքների՝ խաղաղության, ժողովրդավարության և մարդու հիմնարար ազատությունների վրա: Իմ խոսքում կարևորել եմ նաև կանանց, երիտասարդների ներգրավումը մշակութային քաղաքականության մշակման գործընթացում: Անդրադարձել եմ նաև «Իմ արվեստը դպրոցում» ծրագրին, որի շրջանակում հայտնի արվեստագետներն, արվեստաբաններն ու փորձագետները, այցելելով դպրոցներ, իրենց փորձն են փոխանցում դպրոցականներին՝ կրթելու ստեղծագործ երիտասարդություն:

Նշել եմ նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններից է սահմանափակ կարողություններով անձանց ազատ ստեղծագործելու և մշակութային կյանքին մասնակցություն ունենալու հնարավորության ստեղծումը՝ ինչն ապահովում է բազմազանությունը, ներառականությունը և ազատությունը մշակույթի ոլորտում: Կարողությունների զարգացման նպատակով կանանց համար կազմակերպվում են աշխատաժողովներ, սեմինարներ, տոնավաճառներ և այլ միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով փախստականների, մասնավորապես՝ Սիրիայից հայրենիք վերադարձած կանանց համար: Կինոարտադրության բնագավառում նաև հնարավորություն է ընձեռվում մեկտեղել մասնագետների և կինոարտադրողների հնարավորությունները, իսկ ՏՏ ոլորտում այս տարի Եվրոպա Նոստրա մրցանակաբաշխությունում հաղթել են երկու նախագիծ՝ Սոլակ-1 և Թումո ստեղծարար կենտրոնի սաների իրականացրած հետազոտական աշխատանքները:

Գործուղման ընթացքում վերահաստատել եմ Հայաստանի հանձնառությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելությանը՝ միջմշակութային երկխոսության միջոցով նպաստելու խաղաղությանը և ժողովուրդների միջև փոխադարձ հարգանքի ձևավորմանը:

Համաժողովի շրջանակում երկկողմ հանդիպում եմ ունեցել Հունաստանի մշակույթի և սպորտի նախարար Ստիլիանի Մանդոննի հետ՝ վերջինիս խնդրանքով: Հանդիպմանը մասնակցել են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ

դեսպան Քրիստիան Տեր-Ստեփանյանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և բազմակողմ կրթամշակութային համագործակցության բաժնի պետ Լենա Թերզիկյանը: Հանդիպմանը քննարկվել են Հայաստանի և Հունաստանի միջև մշակույթի ոլորտում համագործակցության ընթացքն ու գալիք ծրագրերը: Երկուստեք ընդգծվել է հայ-հունական բարեկամության վրա հիմնված միջմշակութային երկխոսության խորացման և ընդլայնման, մշակութային ժառանգության պահպանման գործում համատեղ ջանքերի կարևորությունը՝ որպես հնագույն քաղաքակրթություններ ներկայացնող երկրներ:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 40-րդ ընդհանուր համաժողովի շրջանակներում կայանալիք մշակույթի նախարարների հանդիպմանը մասնակցության ապահովում "
2. Հունաստանի մշակույթի և սպորտի նախարար Ստիլիանի Մանդոննի հետ հանդիպման կայացում
3. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության խթանում
4. Հունաստանի հետ մշակութային և գործնական կապերի խթանում

25.11.2019

Նարինե Խաչատուրյան